ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2022 ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒԼԻՍ ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտներ)













2022 թ. հունվար-հուլիս ամիսներին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 1 տրիլիոն 86.7 մլրդ դրամ, որը կազմում է ՀՀ կառավարության 2021թ. դեկտեմբերի 23-ի թիվ 2121-Ն որոշմամբ 2022թ. ինն ամսվա հաստատված ցուցանիշի 81.4 %-ը:

2022 թ. հունվար-հուլիս ամիսների փաստացի ցուցանիշը 2021 թ. համապատասխան ցուցանիշից ավել է 24.6 %-ով կամ 214.2 մլրդ դրամով, 2020թ.-ից ավել է 37.6 %-ով կամ 297 մլրդ դրամով, 2019թ. ցուցանիշին գերազանցում է 30.6%-ով կամ 254.7 մլրդ դրամով և 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 60.9 %-ով կամ 411.5 մլրդ դրամով:

2022 թ. հունվար-հուլիս ամիսներին՝

- ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը կազմել են 339.8 մլրդ դրամ, որը 2021 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 19.6 %-ով, 2020 թ. -ից ավել է 33.9 %-ով, 2019 թ.-ից ավել է 25 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 49.3 %-ով,
- ակցիզային հարկի գծով մուտքերը կազմել են 62.3 մլրդ դրամ, որը 2021 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 15.2 %-ով, 2019 թ.-ից ավել է 0.8 %-ով, 2018 թ.-ից ավել է 8.1 %-ով, իսկ 2020 թ.-ից պակաս է 0.4 %-ով,
- եկամտային հարկի գծով մուտքերը կազմել են 265.4 մլրդ դրամ, որը 2021 թ. համապատասխան ցուցանիշից ավել է 7.1 %-ով, 2020 թ. -ից ավել է 9.7 %-ով, 2019 թ.-ից և 2018 թ. -ից ավել է համապատասխանաբար՝ 12.9 %-ով և 33.9 %-ով,
- շահութահարկի գծով մուտքերը կազմել են 168.3 մլրդ դրամ, որը 2021թ. համապատասխան ցուցանիշից ավել է 48.5 %-ով, 2020 թ.-ից ավել է 64.2 %-ով, 2019 թ.-ից ավել է շուրջ 38.9 %-ով և 2018 թ. -ից ավել է 58.1%-ով,
- մաքսատուրքերի գծով մուտքերը կազմել են 32.5 մլրդ դրամ, որը 2021 թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 34.8 %-ով, 2020 թ. -ից պակաս է 8.1 %-ով, 2019 թ.-ից պակաս է 34.1 %-ով և 2018 թ. ցուցանիշից պակաս է 29.6 %-ով,
- բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով մուտքերը կազմել են 57.6 մլրդ դրամ, որը 2021 թ. համապատասխան ցուցանիշից ավել է 61.7 %-ով, 2020 թ. մակարդակը գերազանցում է 87.9 %-ով, 2019 թ. -ից և 2018 թ. -ից ավել է համապատասխանաբար՝ 109.2 %-ով և 67.2 %-ով,
- շրջանառության հարկի գծով մուտքերը կազմել են 27.5 մլրդ դրամ, որը 2021 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 28.2 %-ով, 2020 թ. -ից ավել է 44.9 %-ով, 2019 թ.-ից ավել է 39.8 %-ով, 2018 թ.-ից ավել է 103.1 %-ով,
- սոցիալական վճարների գծով մուտքերը կազմել են 35.3 մլրդ դրամ, որը 2021 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 45.2 %-ով, 2020 թ. -ից ավել է 182.9 %-ով, 2019 թ.-ից ավել է 225.3 %-ով և 2018 թ.-ից շատ է 227.5 %-ով,
- այլ հարկային եկամուտներից մուտքերը կազմել են շուրջ 29.2 մլրդ դրամ, որը 2021 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 13 %-ով, 2020 թ. -ից ավել է 105.5 %-ով, 2019 թ.-ից ավել է 140.6 %-ով և 2018 թ.-ից շատ է 138.2 %-ով,
- պետական տուրքերի գծով մուտքերը կազմել են 68.8 մլրդ դրամ, որը 2021 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 243.1 %-ով, 2020 թ. -ից ավել է 292.8 %-ով, 2019 թ.-ից ավել է 230.3 %-ով և 2018 թ.-ից շատ է 368.9 %-ով:

* Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները,

** Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ ճանապարհային հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը, միասնական մաքսային վճարը, դրոշմանիշային վճարները և այլ եկամուտներ (այդ թվում նաև՝ ՀՀ ՊԵԿ արտաբյուջետային ֆոնդին մուտքագրված գումարները)

Տեղեկատվության աղբյուրը՝ «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2021 թ. դեկտեմբերի 23-ի թիվ 2121-Ն որոշում և ՀՀ ՊԵԿ կայքում հրապարակված տեղեկատվություն